ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Armenia
WWW.ARMENIA.TRAVEL

Հավելված 5

Մ Ր Ց Ո Ւ Յ Թ

ՀՀ մարզերում փառատոներ կազմակերպող կազմակերպություններին աջակցության համար (այսուհետ՝ Միջոցառում)

Մրցութային միջոցառման նկարագրությունը

Միջոցառման իրականացման արդյունքում պետական աջակցություն է տրամադրվելու Հայաստանում մեկ փառատոնի կազմակերպմանը:
Միջոցառման նպատակն է նպաստել Հայաստանում կազմակերպվող փառատոներին՝ ՀՀ համայնքներում զբոսաշրջության և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը՝ տեղական ավանդույթների ու մշակույթի վերականգնման, հյուրընկալող և շրջակա համայնքներում տնտեսական և մարդկային ներուժի բացահայտման ու զարգացման միջոցով:

Միջոցառման *արդյունքը*

Միջոցառման իրականացման արդյունքում պետական աջակցություն է տրամադրվելու Հայաստանում մեկ փառատոնի կազմակերպմանը

Միջոցառման *կազմակերպում*

Միջոցառման իրականացման համար մանրամասն նկարագրված ծրագիր, որը յուրաքանչյուր փառատոնի համար ներառում է՝

- առնվազն 10 տաղավարով տեղական ավանդույթների ու մշակույթի, այդ թվում զբոսաշրջային ներուժի և տարբեր զբոսաշրջային արդյունքների ներկայացում
- տեղի բնակիչների ներգրավվածություն՝ նպաստելով հյուրընկալող և շրջակա համայնքներում տնտեսական և մարդկային ներուժի բացահայտմանն ու զարգացմանը,
- միջոցառման ընթացքում մշակութային միջոցառումների կազմակերպում՝ տեղական ներուժի ներգրավմամբ,
- միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, այդ թվում՝ տեղական և միջազգային տպագիր, առցանց և/ կամ հեռուստատեսային ԶԼՄ-ների միջոցով փառատոնի մասին իրազեկվածության բարձրացում, միջազգային հյուրերի, այդ թվում ոլորտի մասնագետների և հայտնի բլոգերների և/կամ ԶԼՄ ներկայացուցիչների մասնակցության մասին տեղեկատվություն,
- միջոցառման ընթացքում առնվազն 3000 այցելուների մասնակցություն,

Դիմելու պայմանները

Մրցույթին կարող են դիմել այն իրավաբանական անձինք, որոնք ունեն՝

- առնվազն 3 տարվա փառատոների անընդմեջ իրականացման փորձ,

- փառատոների կազմակերպման մասնագիտական թիմ
- տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության փորձ
- համայնքների ներգրավմամբ ծրագրեր իրականացնելու փորձ

Համաձայն մրցութային ընթացակարգի մրցույթի մասնակիցը պետք է ներկայացնի հետևյալ տեղեկատվությունը

- Կազմակերպության գրանցման վկայական
- կազմակերպության իրավասու մարմնի որոշումը մրցույթին նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ
- կազմակերպության փորձի նկարագրություն, ներգրավվող մասնագետների տվյալներ, ինքնակենսագրականներ
- տեղեկատվություն տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության վերաբերյալ
- Փառատոն(եր)ի մանրամասն բնութագիր, գործողությունների ծրագիր և ժամանակացույց
- ծրագրի իրականացման ծախսերի նախահաշիվ՝ տեղեկատվություն իրականացվող միջոցառումների անվանումների, քանակի, միավորի գնի և դրանց համար նախատեսվող ծախսերի՝ նաև համաֆինանսավորման վերաբերյալ:

Հաշվետվողականությունը

Ընտրված թեկնածուն սերտորեն կհամագործակցի Զբոսաշրջության կոմիտեի մարկետինգի վարչության հետ՝ ստանալով անհրաժեշտ ուղղորդումներ և տեղեկատվություն ծրագրի ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ, իսկ հաշվետվությունները կներկայացնի ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի կողմից ստեղծված մրցութային հանձնաժողովի եզրակացությանը:

Կատարված աշխատանքների բովանդակային եւ ֆինանսական հաշվետվությունը պետք է ներկայացվի կնքված Պայմանագրի դրույթներին համապատասխան

Մրցութային ծրագրի ժամկետը և պայմանները

Հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետ՝ դեկտեմբեր 10, 2021թ.:

Վճարման ընթացակարգը

Միջոցառման իրականացման համար կանխավճար չի նախատեսվում:
Վճարումներն իրականացվելու են համաձայն կատարված աշխատանքի արդյունքում ներկայացված հաշվետվությունների և հաշիվ ապրանքագրերի: